ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

- Դավիթ Պողոսյան, «Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

2. Գործուղման վայրը և ժամկետները

- Լայպցիգ, 2026 թ. հունվարի 22-ից 26-ը

3. Հրավիրող կողմը

- Արևելյան Եվրոպայի պատմության և մշակույթի Լայբնից ինստիտուտ Լայպցիգում

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

- Գործնական հանդիպումներ և բանախոսություն:

5. Քննարկված թեմաները

- Համատեղ ցուցադրությունների կազմակերպում Հայաստանի պատմության թանգարանում և ինստիտուտում Հայաստանի պատմության թանգարանի վերաբերյալ բանախոսություն, ապա նաև տարվող հայագիտական հետազոտությունների հետ ծանոթացում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

- Հունվարի 23-ին հանդիպում ՀՀ պատվո հյուպատոսի գրասենյակի ղեկավարի հետ և Լայպցիգում գործող տարբեր մշակութային, գիտական կառույցների հետ համագործակցության շարունակման խնդիրների քննարկում:
- Հունվարի 23-ին հանդիպում Լայպցիգ քաղաքի միջազգային հարցերով ներկայացուցչի հետ «Գրասսի» թանգարանում, ապա հանդիպում «Գրասսի» ազգաբանության թանգարանի տնօրենի հետ, քննարկում թանգարանում պահվող Նոր Ջուղայից բերված ցուցանմուշների շուրջ հետագա հետազոտական և ցուցադրական գործունեություն ծավալելու վերաբերյալ, ապա շրջայց թանգարանում:

- Հունվարի 24-ին այց Լայպցիգի գեղարվեստական թանգարան և ծանոթացում ժամանակավոր ցուցադրության հետ:
- Հունվարի 25-ին հանդիպում Հալլեի երկրագիտական թանգարանի տնօրինության հետ թանգարանում, համատեղ ծրագրերի քննարկում, մասնավորապես թանգարանի տնօրենի Հայաստանի պատմության թանգարանում հատուկ բանախոսության կազմակերպման և թանգարանում պահվող հայտնի «Նեբրա սկավառակի» տիեզերքում ճամփորդած հատուկ կրկնօրինակի ներկայացում:
- Հունվարի 26-ին հանդիպում Արևելյան Եվրոպայի պատմության և մշակույթի Լայբնից ինստիտուտի փոխտնօրենի հետ, հուշագրից բխող համագործակցության շարունակման քննարկում, Հայաստանի պատմության թանգարանում ինստիտուտի հայագիտական խմբի կողմից իրականացված միջնադարյան Անի քաղաքին վերաբերող հետազոտության և դրա արդյունքների հիմքով շրջիկ ցուցահանդեսի կազմակերպման մանրամասների քննարկում:
- Հունվարի 26-ին բանախոսություն նշված ինստիտուտում հայագիտական հետազոտությամբ զբաղվող ասպիրանտների համար և Հայաստանի պատմության թանգարանի վերջին տարիների գործունեության ներկայացում: Բանախոսության ավարտին մասնակից հետազոտողների կողմից սեփական ուսումնասիրությունների արդյուքների ներկայացում, քննարկումներ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

- 2026 թ. թանգարանի և ինստիտուտի համագործակցությամբ ցուցահանդեսի կազմակերպում, պայմանագրի նախապատրաստում:
- 2026 թ. Հալլեի թանգարանի և Գյոթե ինստիտուտի հետ համատեղ բանախոսություն և հատուկ ցուցադրության կազմակերպում Հայաստանի պատամության թանգարանում:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

- 2026 թ. Երևանում նախատեսվող ցուցադրության պայմանագրի պատրաստում:
- Հալլեի թանգարանի հետ համապատասխան կազմակերպչական աշխատանքների իրականացում, պայմանագրի պատրաստում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

29. 01. 2026թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

- Դավիթ Պողոսյան, «Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

2. Գործուղման վայրը և ժամկետները

- Բեռլին, 2026 թ. հունվարի 26-ից 28-ը

3. Հրավիրող կողմը

- Նախապատմական և վաղ պատմական թանգարան, Բեռլինի «թանգարանային կղզում»

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

- Գործնական հանդիպումներ և հուշագրի ստորագրում:

5. Քննարկված թեմաները

- Համատեղ ցուցադրությունների կազմակերպում Հայաստանի պատմության թանգարանում և Բեռլինի «թանգարանային կղզում», մասնագիտական փորձի փոխանակում, համատեղ հետազոտական ծրագրեր:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

- Հունվարի 26-ին հանդիպում Բեռլինի «թանգարանային կղզու» Հնագիտական կետրոնում Նախապատմական և վաղ պատմության թանգարանի տնօրեն Մաթիաս Վեմհոֆի, թանգարանի կուրատոր Նավրոթ Մանֆրեդի և այլ գործընկերների հետ: Քննարկվեցին 2026 սեպտեմբերին Հայաստանի պատմության թանգարանում համատեղ ցուցադրության, Բեռլինի «թանգարանային կղզու» մի շարք թանգարաններից առաջին անգամ Հայաստանում ներկայացվելիք ցուցադրության առարկաների ցանկի և թեմատիկայի, ինչպես նաև 2027 թ. Բեռլինում Հայաստանի պատմության թանգարանի հավաքածուների ցուցադրման հետ կապված կազմակերպչական հարցեր:

- Հունվարի 26-ին Բեռլինի «թանգարանային կղզու» Նոյես թանգարանի հայտնի նախասրահում, հանդիսավոր կերպով, Գերմանիայում ՀՀ դեսպանի ու այլ գործընկերների ներկայությամբ Հայաստանի պատմության թանգարանի և «թանգարանային կղզու» Նախապատմական և վաղ պատմական թանգարանի տնօրենների կողմից հուշագրի ստորագրում, ապա Մաթիաս Վեմհոֆի ուղեկցությամբ ցուցասրահների դիտում և համատեղ ցուցահանդեսների համար նախատեսված ցուցանմուշների հատուկ ներկայացում, ինչպես նաև Հայաստանի պատմության թանգարանի հավաքածուների ցուցադրման սրահների դիտում և քննարկում: «Հնագիտական Պետրի տուն» կոնսերվացիոն և ռեստավրացիոն կենտրոնում Մանֆրեդ Նավրոթի հետ շրջայց և փորձի փոխանակում, նոր ստեղծված հավաքածուների պահպանման, վերականգնման, դրանց հիմքով կրթական ծրագրերի իրականցման հնարավորությունների հետ ծանոթացում:
- Հունվարի 28-ին հանդիպում Գերմանիայի հնագիտության ինստիտուտի ղեկավարության հետ, թանգարանի և ինստիտուտի միջև առկա հուշագրի հիման վրա Լճաշենից պեղված հայտնի փայտե առարկաների ուսումնասիրության շարունակման հետ կապված մանրամասների և պայմանագրի քննարկում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

- 2026 թ. սեպտեմբերի 21-ին Բեռլինի «թանգարանային կղզու» 200 ամյակի առթիվ մեծ ցուցադրության կազմակերպում Հայաստանի պատմության թանգարանում, որը վեց ամսով Հայաստանի պատմության թանգարանի հավաքածուների հետ համադրությամբ առաջին անգամ կներկայացնի կղզու տարբեր թանգարաններից ընտրված 50-ից ավելի ուշագրավ նմուշներ, որոնից մի մասն ընդհանրապես առաջին անգամ է ցուցադրվելու: Ցուցադրության թեման վերաբերելու է հին աշխարհում տիեզերքի, հավատալիքների, առասպելների վերաբերյալ պատկերացումներին:
- 2027 թ. համատեղ ցուցադրության կազմակերպում Բեռլինի «թանգարանային կղզում»:
- Հայաստանի պատմության թանգարանի և Նախապատմական և վաղ պատմական թանգարանի միջև հուշագրի ստորագրում:

- Գերմանիայի հնագիտական ինստիտուտի հետ հետազոտական այցերի շարունակում, Լճաշենից պեղված հնագիտական նյութերի ուսումնասիրման շարունակում:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

- 2026 թ. Երևանում նախատեսվող ցուցադրության վերջնական ցուցանմուշների ցանկերի ճշտում, պաշտոնական փաստաթղթերի կազմում, պայմանագրերի պատրաստում և ցուցադրական աշխատանքների վերսկսում:
- Գերմանիայի հնագիտական ինստիտուտի հետ հուշագրից բխող պայմանագրի նախապատրաստում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

29. 01. 2026թ.